ՎԻԿՏԻՄՈՒԹՅԱՆ ՖԵՆՈՄԵՆԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ՍԵՌԱՅԻՆ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵՐԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Լրատվական կայքի խմբագիր,
ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հայցորդ
meri.yeghiazaryan@edu.isec.am

DOI: 10.54503/978-9939-1-1866-8-133

Համառոտագիր

Արդի հասարակության սոցիալ-մշակութային բազմաշերտ փոփոխությունների համատեքստում ձևավորվող դինամիկ տրանսֆորմացիաներն անհատի առջև կարող են ծառացնել խորքային, էկզիստենցիալ բնույթի բարդ մարտահրավերներ: Նմանատիպ գործընթացները հաճախ խաթարում են անձի ներքին կայունության և սուբյեկտիվ անվտանգության հիմքերը՝ առաջ բերելով ներքին անպաշտպանվածության զգացում: Այս համապատկերում անհատի ինքնության պահպանման և արժանապատվության հաստատման խնդիրը դրսևորվում է որպես հիմնարար հոգեբանական մարտահրավեր:

Անձի սոցիալ-հոգեբանական պաշտպանվածության դիտանկյունից վիկտիմության ֆենոմենը դուրս է եկել զուտ իրավագիտական շրջանակներից՝ վերածվելով միջգիտակարգային հոգեբանական հիմնախնդրի: Այսօր զոհի կարգավիճակն առավելապես մեկնաբանվում է որպես բազմաշերտ սուբյեկտիվ փորձառություն, ինչն էլ հրամայական է դարձնում հանրային կարծրատիպերի վերանայումը:

Խնդրի տեսական արմատները հանգում են դասական հումանիզմի և էկզիստենցիալ հոգեբանության ակունքներին: Դեռևս Լուդվիգ Ֆեյերբախը զոհականությունը դիտարկում էր մարդու սեփական էությունից օտարման պրիզմայով՝ պնդելով, որ անհատը հաճախ դառնում է իր իսկ ստեղծած գաղափարների գերին: Այս գաղափարները հետագայում իրենց արտացոլումն ու զարգացումը գտան վիկտիմոլոգիական տարբեր հայեցակարգերում, որոնք սկսեցին դիտարկել զոհի վարքը ոչ թե որպես ստատիկ վիճակ, այլ որպես անձ-միջավայր փոխազդեցության արդյունք:

Հիմնվելով տեսական ժառանգության և միջգիտակարգային մոտեցումների վրա՝ սույն աշխատանքի շրջանակներում իրականացվել է էմպիրիկ հետազոտություն: Հետազոտության մեթոդաբանական գործիքակազմը կիրառվել է 100 անձից բաղկացած ընտրանքի շրջանում, որն ընդգրկել է 20–25 տարեկան կանանց և տղամարդկանց հավասար ներկայացվածություն: Ընտրված տարիքային խումբը համապատասխանում է Էրիկ Էրիկսոնի կողմից սահմանված վաղ հասունության փուլին՝ հիմնարար մտերմության և մեկուսացման կոնֆլիկտով, որը կարևոր է վիկտիմացման նախադրյալների ուսումնասիրության համար:

Էմպիրիկ տվյալների վերլուծությունը փաստում է, որ երիտասարդների գիտակցության մեջ զոհի կերպարը նույնացվում է կամային ոլորտի դեֆիցիտի՝ անինքնավստահության և թուլակամության հետ:

Հետազոտությունը վեր հանեց սեռային տարբերություններ. եթե

կանանց ընկալումներում զոհի կերպարն ունի սոցիալական սպասումներով պայմանավորված հարմարվողական երանգավորում, ապա տղամարդկանց դեպքում այն առավել պրագմատիկ է և կապվում է ֆիզիկական անկարողության հետ: Երկու խմբերում էլ բարության և ներողամտության նվազագույն ցուցանիշները վկայում են զոհի կերպարի հոգեբանական արժեզրկման մասին, որն ընկալվում է որպես ներանձնային ռեսուրսների սպառման արդյունք:

Ստացված տվյալները գիտական հիմք են երիտասարդների հոգեբանական դիմակայունության բարձրացմանն ու վիկտիմության կանխարգելմանն ուղղված տարբերակված ռազմավարությունների մշակման համար: Այնուամենայնիվ, հայեցակարգի լիարժեք ամբողջականացումը ենթադրում է հետազոտական ընտրանքի հետագա ընդլայնում և նոր փոփոխականների ներառում՝ առավել համապարփակ տեսական մոդել ձևավորելու նպատակով:

Հարկ է նշել, որ սույն ուսումնասիրությունը հետազոտական ընդհանուր շղթայի առանցքային փուլերից մեկն է. այն հաջորդում է նախնական փուլում այլ տարիքային խմբերի հետ իրականացված աշխատանքին:

Հետագայում նախատեսվում է վերլուծել և համադրել ստացված բոլոր տվյալները՝ առավել հավաստի ու գործուն մեխանիզմներ նախանշելու նպատակով:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ վիկտիմություն, սուբյեկտիվ ընկալում, գենդերային առանձնահատկություններ, անձնային խոցելիություն, հոգեսոցիալական զարգացում, սոցիալական կարծրատիպեր, կամային ոլորտ, դիմակայունություն, ինքնարտահայտում:

GENDER AND PERSONAL CHARACTERISTICS IN THE PSYCHOLOGICAL PERCEPTION OF THE PHENOMENON OF VICTIMHOOD

MERI YEGHIAZARYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific–Educational Centre
PhD student
Editor of a news website
meri.yeghiazaryan@edu.isec.am

Abstract

In the context of dynamic transformations emerging from the multilayered socio–cultural changes of contemporary society, individuals are increasingly confronted with profound challenges of an existential nature. Such processes often undermine the foundations of inner stability and subjective security, giving rise to experiences of internal vulnerability. Within this framework, the preservation of identity and the affirmation of personal dignity assume the status of fundamental psychological challenges.

From the perspective of socio–psychological protection, the phenomenon of victimhood has moved beyond the confines of purely legal discourse and has evolved into an interdisciplinary psychological problem. In contemporary scholarship, victim status is conceptualised as a multidimensional subjective experience, thereby necessitating the critical re–examination and deconstruction of entrenched social stereotypes.

The theoretical foundations of the problem can be traced to classical humanism and existential psychology. Ludwig Feuerbach interpreted victimhood through the prism of human alienation from one's own essence, arguing that individuals often become captives of the ideas they themselves create. These propositions were subsequently elaborated within various victimological frameworks, in which victim behaviour came to be understood not as a static condition but as the outcome of complex person–environment interactions.

Drawing upon this theoretical legacy and an interdisciplinary methodological approach, the present study implemented an empirical research design. The study's methodological tools were applied to a sample of 100 individuals, with equal representation of women and men aged 20–25. This age cohort corresponds to the stage of early adulthood in Erik Erikson's psychosocial developmental model, characterised by the fundamental conflict of intimacy versus isolation—an essential developmental context for examining the antecedents of victimisation.

The analysis of empirical data indicates that, in the consciousness of young adults, the image of the victim is predominantly associated with deficits in volitional regulation, including low self–confidence and weak willpower. Gender differences were identified: in female participants' perceptions, the victim image acquires a more adaptive tone shaped by social expectations, whereas in male participants, it is interpreted more pragmatically and linked to notions of physical inadequacy. In both groups, low valuations of kindness and forgiveness within the victim profile suggest a psychological devaluation of the victim image, increasingly perceived as

an indicator of depleted intrapersonal resources.

The obtained data provide a scientific basis for developing targeted strategies to enhance young people's psychological resilience and prevent victimisation. At the same time, the full conceptual framework requires further expansion of the research sample and the inclusion of additional variables to create a more comprehensive theoretical model.

It should be emphasised that the present study constitutes a key stage within a broader research continuum, following a preliminary phase conducted with other age cohorts. In the future, it is planned to analyse and synthesise all the data obtained to identify the most reliable and effective mechanisms.

Keywords and phrases: Victimhood, subjective perception, gender differences, personal vulnerability, psychosocial development, social stereotypes, volitional regulation, resilience, self–expression.

ГЕНДЕРНЫЕ И ЛИЧНОСТНЫЕ ОСОБЕННОСТИ ПСИХОЛОГИЧЕСКОГО ВОСПРИЯТИЯ ФЕНОМЕНА ВИКТИМИЗАЦИИ

МЕРИ ЕГИАЗАРЯН

Редактор новостного сайта,
Соискатель при Международном научно–образовательном центре НАН РА
meri.yeghiazaryan@edu.isec.am

Аннотация

В условиях динамических трансформаций, формирующихся в контексте социокультурных многослойных изменений современного общества, перед личностью актуализируются глубинные вызовы экзистенциального характера. Подобные процессы нередко подрывают основания внутренней устойчивости и субъективного чувства безопасности, инициируя переживание внутренней незащищённости. В данном контексте проблема сохранения идентичности и утверждения личностного достоинства приобретает статус фундаментального психологического вызова.

С позиций социально–психологической защищённости личности феномен виктимности давно вышел за рамки сугубо юридического дискурса, трансформировавшись в междисциплинарную психологическую проблему. В современной научной интерпретации статус жертвы рассматривается как многомерный субъективный опыт, что обусловливает необходимость пересмотра и деконструкции устойчивых общественных стереотипов.

Теоретические основания проблемы восходят к традициям классического гуманизма и экзистенциальной психологии. Так, Людвиг Фейербах трактовал жертвенность через призму отчуждения человека от собственной сущности, подчёркивая, что индивид нередко становится заложником созданных им же идеальных конструкций. Впоследствии данные положения получили развитие в различных виктимологических концепциях, в рамках которых поведение

жертвы стало рассматриваться не как статичное состояние, а как результат сложного взаимодействия личности и социальной среды.

Опираясь на обозначенное теоретическое наследие и междисциплинарную методологию, в рамках настоящего исследования была реализована эмпирическая программа. Методологический инструментарий исследования был применен к выборке из 100 человек, которая включала равное представительство женщин и мужчин в возрасте 20–25 лет. Указанный возрастной период соответствует стадии ранней взрослости в психосоциальной периодизации Эрика Эриксона — этапу, характеризующемуся базовым конфликтом интимности и изоляции, что имеет принципиальное значение для анализа предпосылок виктимизации.

Анализ эмпирических данных показал, что в представлениях молодёжи образ жертвы преимущественно ассоциируется с дефицитом волевой регуляции — неуверенностью в себе и слабостью волевых усилий. Выявлены гендерные различия в структуре восприятия: в женских респондентских группах образ жертвы носит более адаптивную окраску, детерминированную социальными ожиданиями, тогда как в мужских группах он интерпретируется в более прагматическом ключе и коррелирует с представлениями о физической несостоятельности. Низкие показатели, отражающие ценность доброжелательности и терпимости в структуре образа жертвы, свидетельствуют о его психологической девальвации и восприятии как индикатора истощения внутриличностных ресурсов.

Полученные данные служат научной основой для разработки дифференцированных стратегий повышения психологической устойчивости молодежи и предотвращения виктимизации. В то же время полное формирование концепции требует дальнейшего расширения исследовательской выборки и включения новых переменных с целью создания более комплексной теоретической модели.

Следует подчеркнуть, что представленное исследование является одним из ключевых этапов комплексной исследовательской программы: ему предшествовал аналитический этап, реализованный на других возрастных когортах. В дальнейшем планируется проанализировать и обобщить все полученные данные с целью определения наиболее достоверных и эффективных механизмов.

Ключевые слова и фразы: виктимность, субъективное восприятие, гендерные особенности, личностная уязвимость, психосоциальное развитие, социальные стереотипы, волевая регуляция, резильентность, самореализация.

Ներածություն

Արդի հասարակական տրանսֆորմացիաները, որոնք ընթանում են սոցիալ-տնտեսական և մշակութային դինամիկ փոփոխությունների ներքո, իրենց հետ բերում են ոչ միայն զարգացման նոր հեռանկարներ, այլև համակարգային բարդ հակասություններ: Այս գործընթացների կենտրոնում առանձնակի սրությամբ է դրվում անհատի՝ որպես սոցիալական սուբյեկտի անվտանգության, իրավական պաշտպանվածության և արժանապատվության պահպանման խնդիրը: Մարդու իրավունքների երաշխավորման և սոցիալական ապահովության համատեքստում վիկտիմության ֆենոմենը դուրս է եկել զուտ իրավագիտական ուսումնասիրության շրջանակներից՝ վերածվելով

միջգիտակարգային հոգեբանական և սոցիոլոգիական հիմնախնդրի:

Վիկտիմությունը, որն ավանդաբար ընկալվում էր որպես քրեական ոտնձգության հետևանքով հասցված ֆիզիկական կամ նյութական վնասի կրում, ժամանակակից գիտական պատկերացումներում մեկնաբանվում է որպես բազմաշերտ սուբյեկտիվ փորձառություն: Այն ներառում է անձի հուզական, կոգնիտիվ և վարքային արձագանքները՝ սկսած ակնհայտ բռնության հետևանքներից մինչև հոգեբանական նուրբ վնասվածքներն ու սոցիալական մեկուսացումը:

Այսօրինակ ընդլայնված մոտեցումը հրամայական է դարձնում վիկտիմության ընկալման մեջ առկա հասարակական կարծրատիպերի և մեղավորության բաշխման մեխանիզմների վերանայումը, քանի որ հանրային կանխակալ վերաբերմունքը հաճախ խոչընդոտում է զոհերի լիարժեք վերականգնմանն ու աջակցման համակարգերի արդյունավետությանը:

Սույն հետազոտության նպատակն է վեր հանել վիկտիմության տեսական և գործնական հարթությունները՝ առանձնակի ուշադրություն դարձնելով զոհի ընկալման սեռային առանձնահատկություններին, հասարակական պատկերացումներին, դրանց հիմքում ընկած հոգեբանական գործոններին և այդ ընկալումների ձևավորման գործընթացում դեր ունեցող հոգեբանական պաշտպանական մեխանիզմներին:

Նմանատիպ վերլուծությունը հիմք կհանդիսանա զոհակենտրոն և վերականգնողական ռազմավարությունների նախագծման համար, որոնք միտված կլինեն տուժած անձանց իրական կարիքների առավել հստակ ու թիրախավորված արձագանքման մեխանիզմների ձևավորմանը:

Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ հիմնարար խնդիրները.

- վերլուծել վիկտիմության հոգեբանական բաղադրիչների ազդեցությունն անձի ներքին կայունության և ինքնընկալման վրա՝ սոցիալ-մշակութային տրանսֆորմացիաների համատեքստում,
- բացահայտել սեռային գործոնի դերը զոհի կերպարի ընկալման մեջ՝ վեր հանելով կանանց և տղամարդկանց մոտեցումների առանձնահատկությունները,
- ուսումնասիրել հասարակական գիտակցության մեջ առկա կարծրատիպերի ազդեցությունը վիկտիմության արժեզրկման գործընթացի վրա՝ դիտարկելով զոհի կերպարը բարոյական առաքինություններից զուրկ ընկալումների տիրույթում,
- հետազոտել անձնային գործոնների, մասնավորապես՝ կամային ոլորտի խաթարումների (անինքնավստահություն, թուլակամություն) և վիկտիմացման սուբյեկտիվ փորձի միջև առկա փոխազդեցությունը,
- հիմնավորել վաղ հասունության փուլում գտնվող անձանց դիմակայունության և ներանձնային ռեսուրսների ակտիվացման անհրաժեշտությունը՝ որպես վիկտիմիզացման ռիսկերի նվազեցման հոգեբանական նախադրյալ:

Աշխատանքում հատուկ շեշտադրվում է այն գաղափարը, որ վիկտիմությունը ոչ թե ստատիկ վիճակ է, այլ անձի և արտաքին սոցիալական միջավայրի դինամիկ փոխազդեցության արդյունք: Ներկայացվող նոր հայեցակետը թույլ է տալիս վիկտիմության երևույթը դիտարկել որպես անձնային և սոցիալական գործոնների համալիր համակարգ, ինչն անհրաժեշտ

նախապայման է գիտակցված և համակողմանի հոգեբանական աջակցության ծրագրերի իրականացման համար:

Տեսամեթոդական հիմքեր

Վիկտիմոլոգիան, որն իր անվանումը ստացել է լատիներեն victima (զոհ) արմատից, ձևավորվել է 20-րդ դարի կեսերին՝ որպես քրեագիտության մասնագիտացված ուղղություն: Զոհականության երևույթի փիլիսոփայական հիմքերը, ձևավորվել են դեռևս 19-րդ դարում՝ արտահայտվելով Լուդվիգ Ֆեյերբախի հումանիստական հայեցակարգերում: Ֆեյերբախը զոհակա-նությունը դիտարկում էր մարդու սեփական էությունից օտարման պրիզմայով՝ պնդելով, որ անհատը հաճախ դառնում է իր իսկ կողմից ստեղծված համակարգերի ու գաղափարական կառուցվածքների գերին: Այս մարդակենտրոն մոտեցումը հիմք դարձավ վիկտիմության՝ որպես անձի և իրողության միջև առկա հակասության ըմբռնման համար:

Թեև վիկտիմոլոգիան սկզբնավորվել է քրեագիտության շրջանակներում, այն աստիճանաբար տրանսֆորմացվել է որպես ինքնուրույն գիտական ուղղության: Այսօր այն ուսումնասիրում է ոչ միայն իրավախախտման օբյեկտ հանդիսացող անձանց, այլև զոհի սոցիալ-հոգեբանական կերպարը տարբեր՝ քաղաքական, մշակութային և խորհրդանշական հարթություններում: Ըստ Լ. Ֆրանկի՝ հոգեբանական բաղադրիչի ներմուծումը վճռորոշ դեր է խաղացել գիտակարգի կայացման գործում **[7]:** Հենց Լ. Ֆրանկի կողմից շրջանառվեց «վիկտիմիզացիա» եզրույթը, որը բնորոշում է անհատի՝ զոհի վերածվելու դինամիկ գործընթացը և դրա վերջնարդյունքը:

Վիկտիմոլոգիական մտքի զարգացման ընթացքում ձևավորվել են երկու հիմնական բևեռներ. կենսաբանական, որը շեշտադրում է տուժողի գենետիկ նախատրամադրվածությունը **[6],** և սոցիալ-դաստիարակչական, ըստ որի՝ անձի վարքագիծը ձևավորվում է բացառապես միջավայրի և սոցիալականացման արդյունքում: Դ. Ռիվմանը լրացնում է այս պատկերը՝ պնդելով, որ վիկտիմությունը պետք է դիտարկել որպես անձի ներհատուկ անկարողություն՝ դիմակայելու հանցավոր ոտնձգությանը, ինչը կարող է պայմանավորված լինել նաև նրա սոցիալական կամ ծառայողական դիրքով **[5, էջ 35-50]:**

Այնուհետ Էնդրյու Կարմենի **[15]** և Ջ. Էնգելի **[10]** աշխատությունները սկսեցին վիկտիմիզացիան դիտարկել ոչ միայն որպես քրեական ակտի հետևանք, այլև որպես հուզական ու հոգեբանական տառապանքի աղբյուր: Հանս ֆոն Հենտիգը դեռևս վաղ շրջանում մատնանշել էր, որ զոհերը հանցագործության ակտիվ մասնակիցներ են և գտնվում են դինամիկ փոխազդեցության մեջ հանցագործի հետ, ընդ որում՝ որոշակի խմբեր (կանայք, տարեցներ) ի սկզբանե ունեն ավելի բարձր խոցելիություն **[13]:** Հենրի Էլենբերգերը զարգացրեց այս միտքը՝ նշելով, որ ներքին հոգեբանական կառուցվածքների և սոցիալական միջավայրի փոխազդեցությունը կարող է անձին դնել միաժամանակ և՛ զոհի, և՛ հանցագործի դերում:

Միջազգային իրավական հարթակում 1985թ. ՄԱԿ-ի Հռչակագիրը դարձավ շրջադարձային՝ ամրագրելով զոհի իրավունքների պաշտպանությունը որպես մարդու հիմնարար իրավունքների մաս: 90-ականներից սկսած՝ Փ. Վեցելսի և Թ. Օիլեմախերի հետազոտությունները վերջնականապես տեղափոխեցին շեշտադրումը դեպի սուբյեկտիվ ընկալումը. վիկտիմությունը սկսեց սահման-

վել ըստ այն բանի, թե ինչպես է անհատն ապրում և մեկնաբանում իր տառապանքը:

21-րդ դարի հետազոտությունները, ինչպիսիք են՝ Ա. Դեմարիսի և Կ. Կաուկինենի **[9]** աշխատանքները, վերլուծում են բռնության երկարաժամկետ ազդեցությունը հոգեկան առողջության վրա: Ջենիֆեր Դաննը վիկտիմությունը դիտարկում է որպես գոյության փլուզում և նոր իմաստների որոնում, իսկ Ա. Փեմբերթոնն ու Ե. Մալդերը **[17]** այն բնորոշում են որպես «տրանսֆորմատիվ փորձ», որը կարող է հանգեցնել անձի վերաիմաստավորման և դիմակայունության զարգացման: Սայմոնսի և գործընկերների **[20]** հետազոտությունները բացահայտում են միջսերնդային կապերը՝ ցույց տալով, թե ինչպես է վաղ շրջանի ընտանեկան բռնությունը մեծացնում հետագա վիկտիմացման ռիսկը: Արդի փուլում Թ. Պրատը և Ջ. Տուրանովիչը **[19]** առաջարկում են վիկտիմիզացիայի առավել լայն սահմանում, որը ներառում է նաև սոցիալական մերժումն ու խտրականությունը:

Վերջին զարգացումներն, այդ թվում՝ Գ. Գաջոսի և Ջ. Բուտվելի մոտեցումները, կոչ են անում ուսումնասիրել ինտելեկտուալ և ճանաչողական գործոնների (ինքնատիրապետում, վերացական դատողություն) դերը վիկտիմության կանխարգելման գործում, իսկ Շ. Մաքգրատն ու Ջ. Էբոթը **[16]** շեշտադրում են սեռային տարբերությունները վախի և զուգընկերոջ բռնության ընկալման հարցերում:

Այսպիսով՝ վիկտիմոլոգիան անցել է զարգացման բարդ ուղի՝ պարզունակ քրեագիտական մեկնաբանություններից հասնելով մինչև անձի սուբյեկտիվ աշխարհ՝ վերածվելով սոցիալական տրանսֆորմացիաները ներառող բազմաշերտ գիտական համակարգի:

Ուսումնասիրության մեթոդներ

Հիմք ընդունելով վերոշարադրյալ տեսական հայեցակարգերը և տարբեր հեղինակների կողմից իրականացված բազմամյա ուսումնասիրությունները՝ ակնայտ է դառնում, որ վիկտիմության ֆենոմենը մշտապես ենթարկվում է տրանսֆորմացիաների՝ կախված սոցիալ-մշակութային համատեքստից և սերնդային առանձնահատկություններից: Չնայած դասական և արդի հեղինակների կողմից վեր հանված օրինաչափություններին՝ անհրաժեշտություն առաջացավ իրականացնել էմպիրիկ հետազոտություն, որը թույլ կտա գնահատել զոհի կերպարի սուբյեկտիվ ընկալումները համապատասխան սոցիալ-հոգեբանական միջավայրում և կոնկրետ տարիքային խմբի շրջանակներում:

Սույն ուսումնասիրության շրջանակներում կիրառվել է համակցված մեթոդաբանական մոտեցում, որն իր մեջ ներառում է տեսական համադրական վերլուծություն և էմպիրիկ տվյալների հավաքագրում՝ կառուցվածքային հարցման մեթոդով: Հետազոտության ընտրանքային խումբը կազմել են 20-ից 25 տարեկան անձինք (ընդհանուր՝ n=100, 50-ական տղամարդ և կին):

Հոգեբանական զարգացման համատեքստում տվյալ տարիքային խումբը դասակարգվում է ըստ Էրիկ Էրիկսոնի հոգեսոցիալական տեսության՝ բնութագրվելով որպես վաղ հասունության փուլ:

Հարցումն իրականացվել է անանուն և ինքնալրացվող ձևաչափով՝ ապահովելու մասնակցության կամավորությունն ու ստացված տվյալների անկողմնակալությունը:

Ուսումնասիրությունը թույլ է տալիս դիտարկել սեռային տարբերություններն ու թիրախային խմբի հոգեբանական առանձնահատկությունները, ինչպես նաև՝ վերլուծել այդ ընկալումների ձևավորման գործընթացում հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հնարավոր դերը:

Ստացված արդյունքներ

Վիկտիմության կանխարգելման և արդյունավետ հոգեբանական օգնության համակարգերի ձևավորման գործում առանցքային է զոհի ընկալման և դրա շուրջ ձևավորված հանրային դիսկուրսի վերլուծությունը: Հոգեբանական հետազոտությունների համաձայն՝ հենց այդ ընկալումներն են ձևավորում հասարակական վերաբերմունքի սպեկտրը, որը կարող է դրսևորվել թե՛ որպես աջակցող կարեկցանք, թե՛ որպես ժխտողական կամ մեղադրական դիրքորոշում:

Մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքները բացահայտեցին մի շարք հետաքրքիր օրինաչափություններ, ինչպես նաև՝ սեռային և հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված տարբերություններ, որոնք արժանի են առանձին վերլուծության:

Ստորև ներկայացվում են տվյալները և դրանց համակարգային վերլուծությունը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Զոհի ընկալումները 20–25 տարեկան կանանց և տղամարդկանց շրջանում

Տարիքային խումբը՝ 20–25	Վախկոտ	Դժգոհ	Համեստ	Բարի	Անինքնավստահ	Ոչ կոնֆլիկտային	Թույլ (ֆիզիկապես)	Ներողամիտ	Թուլական	Գրազեղ
Կանայք	5 %	12%	3 %	5%	20%	15%	6%	4%	18%	12%
Տղամարդիկ	3%	16%	4%	7%	18%	10%	12%	5%	15%	10%

Վաղ հասունության փուլում գտնվող անձանց պատկերացումները զոհի վերաբերյալ կրում են ինչպես համամարդկային հոգեբանական օրինաչափությունների, այնպես էլ գենդերային սոցիալականացման ազդեցությունը:

Հետազոտության արդյունքների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց համար զոհի կերպարի առանցքային բաղադրիչը անձնային ռեսուրսների դեֆիցիտն է, ինչն առավել ցայտուն կերպով արտահայտվում է անինքնավստահության և թուլակամության բարձր ցուցանիշներով: Այս երկու բնութագրիչները հանդես են գալիս որպես զոհի հոգեբանական դիմանկարի հիմնասյուներ՝ փաստելով, որ երիտասարդ սերունդը զոհի կարգավիճակը կապում է, նախևառաջ, կամային ոլորտի խաթարումների և սեփական «Ես»-ի անբավարար արժևորման հետ:

Կանանց ընկալումների տիրույթում նկատվում է զոհի կերպարի որոշակի հարմարվողական երանգավորում, որտեղ զգալի տեղ է հատկացվում ոչ կոնֆլիկտային վարքագծին: Սա կարող է մեկնաբանվել որպես սոցիալական սպասումների արդյունք, երբ զիջողականությունը կամ կոնֆլիկտից խուսափելը դիտարկվում է զոհ դառնալու նախապայման կամ ուղեկցող գործոն:

Միևնույն ժամանակ, կանանց կողմից զոհի «թուլակամության» բարձր գնահատականը (18%) հուշում է, որ նրանք վիկտիմացումն ընկալում են որպես ներանձնային պայքարի բացակայություն:

Հետաքրքրական է նաև գրագիտության գործոնի ընկալումը, որը թեև զոհի դասական բնութագրիչ չէ, սակայն հարցվածների զգալի մասի մոտ առկա է, ինչը վկայում է այն մասին, որ ժամանակակից երիտասարդ կնոջ գիտակցության մեջ ինտելեկտուալ բարձր մակարդակը պաշտպանիչ գործոն սոցիալ-հոգեբանական վիկտիմացումից խուսափելու համար:

Տղամարդկանց շրջանում զոհի ընկալումը կրում է ավելի պրագմատիկ և արտաքին-առարկայական բնույթ, ինչն արտահայտվում է ֆիզիկական թուլության և դժգոհության սանդղակներում գրանցված բարձր ցուցանիշներով: Ի տարբերություն կանանց՝ տղամարդիկ երկու անգամ ավելի հաճախ են զոհի կերպարը կապում ֆիզիկական անկարողության հետ, ինչը համահունչ է առնականության վերաբերյալ կարծրատիպային պատկերացումներին, որտեղ ուժը դիտարկվում է որպես պաշտպանվածության հիմնական երաշխիք: Տղամարդկանց շրջանում «դժգոհություն» ցուցանիշի համեմատաբար բարձր տոկոսը (16%) մատնանշում է զոհի կերպարի հուզական բացասական երանգավորումը: Ըստ այդ ընկալման՝ զոհը դիտարկվում է որպես պասիվ սուբյեկտ, որ հակված է իրավիճակից դժգոհելուն, այլ ոչ թե այն փոփոխելուն ուղղված գործուն քայլեր ձեռնարկելուն կամ դիմադրություն ցուցաբերելուն:

Այս դիտարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ տղամարդիկ զոհի կերպարը դիտարկում են որպես ակտիվության և արդյունավետության հակապատկեր:

Հատկանշական է, որ երկու սեռային խմբերում էլ բարության և ներողամտության ցուցանիշները գտնվում են նվազագույն մակարդակում, ինչը վկայում է զոհի կերպարի «դե-ռոմանտիզացիայի» մասին: Եթե նախկինում զոհի կերպարը կարող էր զուգորդվել բարոյական վեհության կամ անձնազոհության հետ, ապա ժամանակակից հոգեբանական պատ-կերացումներում այն զրկվել է դրական բարոյական երանգավորումից: Ներկայումս զոհի կերպարն առավելապես զուգորդվում է պասիվ-դեֆիցիտար հատկանիշների և սոցիալ-հոգեբանական անգործության հետ:

Վախկոտության ցածր ցուցանիշները թույլ են տալիս ենթադրել, որ զոհի վարքագիծը ոչ թե սուր հուզական վախի արդյունք է դիտարկվում, այլ անձի կառուցվածքային առանձնահատկություն, ինչպիսին է համեստությունը կամ ընդհանուր կամային թուլությունը:

Ամփոփելով հետազոտական տվյալների վերլուծությունը՝ կարելի է փաստել, որ 20–25 տարեկան անձանց պատկերացումներում զոհը հանդես է գալիս որպես հոգեբանական անբավարար ինքնավարություն ունեցող սուբյեկտ: Սեռային տարբերությունները դրսևորվում են զոհի խոցելիության աղբյուրների մեկնաբանման մեջ. կանայք շեշտադրում են սոցիալական հարմարվողականությունն ու կոնֆլիկտի բացակայությունը, իսկ տղամարդիկ՝

ֆիզիկական և հուզական–բացասական բաղադրիչները:

Եզրակացություն

Վիկտիմության ֆենոմենի համակողմանի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այս երևույթը ժամանակակից գիտական ընկալումներում դուրս է եկել զուտ իրավագիտական սահմաններից՝ վերածվելով բազմաշերտ հոգեբանական կառուցվածքի: Տեսական վերլուծությունը փաստում է, որ զոհի կարգավիճակը պայմանավորված է ոչ միայն արտաքին հանգամանքներով, այլև անհատի ներքին հոգեֆիզիկական խոցելիությամբ և սուբյեկտիվ փորձառությամբ, ինչը հաստատվում է դասական և արդի հեղինակների հայեցակարգերում: Էմպիրիկ հետազոտության արդյունքները, որոնք իրականացվել են վաղ հասունության փուլում գտնվող անձանց շրջանում, ցույց են տալիս, որ ժամանակակից երիտասարդության գիտակցության մեջ զոհի կերպարը զուրկ է բարոյական «ռոմանտիզացիայից» և առավելապես զուգորդվում է անձնային ռեսուրսների դեֆիցիտի հետ: Հատկանշական է, որ անինքնավստահությունն ու թույլ կամքը դիտարկվում են որպես վիկտիմության ընկալման հիմնարար չափանիշներ: Սա մատնանշում է այն համոզմունքը, որ զոհի կարգավիճակը սուբյեկտիվորեն ընկալվում է որպես անձի ինքնագնահատականի և կամային ոլորտի դեֆիցիտի անմիջական հետևանք:

Հետազոտությունը վեր է հանել նաև զգալի սեռային տարբերություններ՝ զոհի կերպարի մեկնաբանման հարցում. եթե կանայք հակված են վիկտիմությունը կապել սոցիալական հարմարվողականության և կոնֆլիկտներից խուսափելու վարքագծի հետ, ապա տղամարդիկ այն դիտարկում են ֆիզիկական և էմոցիոնալ անկարողության տեսանկյունից: Սա թույլ է տալիս պնդել, որ հասարակական պատկերացումները դեռևս կրում են կարծրատիպային ազդեցություններ, որտեղ կնոջ զոհականությունը ընկալվում է որպես սոցիալական «մեղմություն», իսկ տղամարդունը՝ որպես կենսաբանական թուլություն:

Այս տարբերությունների ձևավորման գործում առանցքային դերակատարում ունեն հոգեբանական պաշտպանական մեխանիզմները: Զոհի կերպարի արտաքին–պրագմատիկ բնութագրումը (ֆիզիկական թուլություն, դժգոհություն) տղամարդկանց շրջանում կարող է դիտարկվել որպես պրոյեկցիայի դրսևորում, որտեղ սեփական հնարավոր խոցելիությունը վերագրվում է բացառապես արտաքին հատկանիշներին: Զուգահեռաբար, կանանց պատկերացումներում զոհի «ոչ կոնֆլիկտայնության» ընդգծումը կարող է վկայել ռացիոնալացման մեխանիզմի գործադրման մասին: Այս դեպքում զոհի վարքագիծը վերաիմաստավորվում է որպես սոցիալապես ընդունելի հարմարվողականություն՝ դիտարկվելով ոչ թե որպես թուլություն, այլ որպես հարաբերություններում ներդաշնակություն պահպանելու միջոց:

Այս ամենը հիմք է տալիս փաստելու, որ հանրային պատկերացումները դեռևս գտնվում են գենդերային կարծրատիպերի զգալի ազդեցության տակ: Եթե կնոջ դեպքում զոհի կարգավիճակը կարող է ռացիոնալականացվել որպես բնավորության «մեղմություն», ապա տղամարդու պարագայում այն ընկալվում է որպես թուլություն՝ դուրս մնալով առնականության ընդունված կաղապարներից:

Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ վաղ հասունության տարիքում վիկտիմության հոգեբանական ընկալումը հիմնականում խարսխված է

անձնային անկարողության գիտակցման վրա:

Այնուամենայնիվ, թեև ստացված արդյունքներն ունեն նշանակալի գիտական ներուժ, դրանց համընդհանուր կիրառելիությունը պահանջում է հետագա ուսումնասիրություններ, որոնք կներկայացնեն վիկտիմության հոգեբանական և սոցիալական հարթությունների առավել համապարփակ պատկերը: Նման բազմաշերտ մոտեցումը թույլ կտա մշակել նպատակային միջամտություններ՝ ուղղված թե՛ անհատական, թե՛ համայնքային մակարդակներում վիկտիմության աստիճանի նվազեցմանն ու աջակցության արդյունավետ մեխանիզմների ներդրմանը:

Հարկ է շեշտել, որ սույն ուսումնասիրությունը հետազոտական ընդհանուր շղթայի առանցքային փուլերից մեկն է. այն հաջորդում է այլ տարիքային խմբերի շրջանում իրականացված նախնական աշխատանքին: Հետագայում նախատեսվում է համադրել և սինթեզել ստացված ողջ տեղեկատվությունը՝ վիկտիմության կանխարգելման առավել հավաստի ու գործնական ռազմավարություններ մշակելու նպատակով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Барановский Н. А., Введение в виктимологию: учебно-методическое пособие, Минск, БИП-С, 2002, 107 с.
2. Качаева М. А., Дозорцева Е. Г., Борисенко Е. В., Е. В. Отсроченные последствия пережитого домашнего насилия у женщин и девочек. Психология и право, 2017, Том 7, №3, pp. 110–126. URL: https://psyjournals.ru/en/journals/psylaw/archive/2017_n3/87537, (07.01.2026)
3. Малкина-Пых И. Г., Психология поведения жертвы, Москва, Эксмо, 2006, 1008 с.
4. Райкова К. А., Савенкова Е. Н., Ефимов А. А., Гирюк С. А., Корсак В. О., Анализ проблемы домашнего насилия и путей её решения в современном мире // Современные проблемы науки и образования, 2022 // URL: https://science-education.ru/ru/article/view?id=31810, (11.01.2026)
5. Ривман Д. В., К вопросу о социально-психологической типологии потерпевших от преступлений // Виктимологические проблемы борьбы с преступностью, Иркутск, 1988, с. 35–50.
6. Тарарухин С. А., Преступное поведение (социальные и психологические черты), Москва, Юрид. лит., 1974, 110 с.
7. Франк Л. В., Виктимология и виктимность, Душанбе, 1975, 114 с.
8. De Puy J., Radford L., Le Fort V., RomaIn-Glassey N., Developing assessments for child exposure to intimate partner violence in Switzerland – A study of medico-legal reports in clinical settings // Journal of Family Violence, 2019, Vol. 34 // URL: https://doi.org/10.1007/s10896-019-00047-1, (15.01.2026)
9. Demaris A., Kaukinen C., Violent victimisation and women's mental and physical health: Evidence from a national sample // Journal of Family Violence, 2005, Vol. 20 (2), pp. 165–179 // URL: https://doi.org/10.1177/0022427804271922, (19.01.2026)
10. Engel G. L., The need for a new medical model: A challenge for biomedicine // Science, 1977, Vol. 196 (4286), էջ 129–136 // URL: https://doi.org/10.1126/science.847460 (24.01.2026)
11. Engel G. L., The clinical approach to the victim: A humanistic perspective // The American Journal of Psychiatry, 1980, Vol. 137 (10), pp. 1289–1292.
12. Garcia-Martin R., Morentin B., Child abuse due to domestic violence: Integral forensic assessment // Spanish Journal of Legal Medicine, 2020, Vol. 46 (1), pp. 28–40 // URL: https://doi.org/10.1016/j.medleg.2019.10.004 (28.01.2026)
13. Henting G., The criminal and his victim // Journal of Criminal Law and Criminology, 1948, Vol. 39 (3), pp. 303–309.
14. Jones M. L., Nolte K., O'Brien J. A., Trumbell M. J., Mitchell J. K., Factors related to providers screening children for behavioural health risks in primary care settings // Journal of Pediatric Nursing, 2021, Vol. 59, pp. 37–44. // URL: https://doi.org/10.1016/j.pedn.2021.02.006 (31.01.2026)
15. Karmen A., Crime victims: An introduction to victimology (8th ed.), Wadsworth, Cengage

Learning, 2012, 560p.
16. McGrath S. A., Abbott J., & all authors. Intimate partner violence and additional victim–offender relationships: An examination of gender and other differences in victim fear using National Crime Victimisation Survey data // Violence and Victims, 2025:
17. Pemberton A., Mulder E., et al., Victimisation as transformative experience: A phenomenological perspective // Criminology & Criminal Justice, 2024 // URL: https://doi.org/10.1177/13624806241271764, (05.02.2026)
18. Potter L., Morris R., Hegarty K., Garcia–Moreno C., Categories and health impacts of intimate partner violence in the World Health Organisation multi–country study on women's health and domestic violence // International Journal of Epidemiology, 2021, Vol. 50, pp. 652–662 // URL: https://doi.org/10.1093/ije/dyaa231 (08.02.2026)
19. Pratt T. C., Turanovic J. J., Revitalising victimisation theory: Revisions, applications, and new directions // Journal of Victimology, 2021, Vol. 22 (3), pp. 567–589 // URL: https://www.routledge.com/Revitalizing–Victimization–Theory–Revisions–Applications–and–New–Directions/Pratt–Turanovic/p/book/9780367748036 (11.02.2026)
20. Symons K., Hellemans S., Van Houtte M., Vermeersch H., The effect of family violence on sexual victimisation among young women // Journal of Social Issues, 2016, Vol. 72 (4), pp. 759–769 // URL: https://doi.org/10.1111/josi.12182 (14.02.2026)
21. Webster K., A preventable burden: Measuring and addressing the prevalence and health impacts of intimate partner violence in Australian women: ANROWS compass 07/2016, Australia, 2016